

## Արձանագրություն

Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2017թ. դեկտեմբերի 28-ի թիվ 9 նիստի արձանագրությունից

Դեկան Է. Մինասյանը ներկայացրեց օրակարգը, նշելով որ ունենք 2 հարց:

1. Քննաշրջանի հետ կապված հարցերի քննարկում:

2. Պ. գ. թ. Հ. Թ. Հարությունյանի՝ դոցենտի կոչում ստանալու դիմումի քննարկում և քվեարկություն:

1. Քննաշրջանի հետ կապված հարցերի վերաբերյալ զեկուցեցին Է. Մինասյանը, ինչպես նաև ամբիոնների վարիչները: Նշեցին, որ ընթացիկ խնդիրներ քննաշջանի հետ կապված չկան, ժամանակացույցին համապատասխան կազմակերպվել են ընթացիկ քննությունները, հստակ է նաև եզրափակիչ քննությունների ժամանակացույցը:

2. **Լսեցին** – Հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Հասմիկ Թելմանի Հարությունյանի դիմումը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու վերաբերյալ:

**Արտահայտվեցին**- ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյանը, պ. գ. դ., պրոֆ., Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ Հ. Գ. Ավետիսյանը, պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը նշեց, որ Հ. Թ. Հարությունյանը դիմել է դոցենտի կոչում ստանալու համար, ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում հայցելու պայմաններին, քննարկվել են մրցութային հանձնաժողովում և երաշխավորվել գիտական խորհրդում քվեարկվելու համար:

Հնագիտության և ազգագրության ամբիոնը ևս իր նիստում միաձայն երաշխավորել է Հ. Հարությունյանին թեկնածությունը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը ներկայացրեց Հ. Թ. Հարությունյանի փաստաթղթերը, նշելով, որ Հ. Հարությունյանը Հնագիտության և ազգագրության ամբիոնում դասախոսական աշխատանքի է անցել 2003թ.: ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում դասավանդել և դասավանդում է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական դասընթացներ, ղեկավարում է կուրսային, ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: 2017-2018 ուս. տարում նրա ծանրաբեռնվածությունը կազմում է 535 ժամ, որոնցից 176-ը լսարանային ժամեր են:

Հ. Հարությունյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: Համատեղության կարգով աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Հեղինակ է շուրջ երկու տասնյակ գիտական ու մեթոդական աշխատանքների: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո հեղինակել է 4 գիտական հոդված ու 1 ուսումնամեթոդական ծրագիր: Մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովների:

Հանձնաժողովը միաժամանակ նշում է, որ Հասմիկ Հարությունյանը իր գործի մեջ բանիմաց է և ակտիվ, իսկ ուսանողության նկատմամբ՝ ուշադիր ու պահանջկոտ: Նա բնավորությամբ բարեկիրթ է, պատրաստակամ իր օգնությունը բերելու ֆակուլտետի հետ կապված խնդիրների լուծմանը: Նա վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության սերն ու հարգանքը: Հասմիկ Հարությունյանի վերջին երեք տարվա ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,72 միավոր:

Մրցութային հանձնաժողովը ևս ելնելով վերոհիշյալից երաշխավորում է պատմ. գիտ. թեկնածու Հասմիկ Հարությունյանին հայցելու դոցենտի կոչում:

Ելույթ ունեցողները ևս բարձր գնահատեցին Հ. Հարությունյանին գիտական ու մանկավարժական գործունեությունը և առաջարկեցին թույլատրել քվեարկվել ֆակուլտետի գիտական խորհրդում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ա. Նահապետյան /նախագահ/, անդամներ՝ պ. գ. դ., դոց. Հ. Ժ. Հարությունյան, պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան:

Քվեարկության ավարտից հետո մրցութային հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից 26-ը: Քվեատուփում հայտնաբերվել է 26 քվեաթերթիկ: Վավեր քվեաթերթիկները թիվը՝ 26:

Հասմիկ Թելմանի Հարությունյանի օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայն:

Է. Գ. Մինասյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին միաձայն:

### **Որոշեցին՝**

1. Հաստատել քվեարկության արդյունքները:
2. Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Հասմիկ Թելմանի Հարությունյանին սահմանված ընթացակարգով դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

**Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ**  
պ. գ. դ., պրոֆ. Է. Գ. Մինասյան

**Խորհրդի գիտական քարտուղար**  
պ. գ. թ., դոց. Մ. Ռ. Գաբրիելյան